ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

30 օգոստոսի չորեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

120
(2786)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՀԾԿՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏԱՆԻՔԻ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահ Գարեգին Բաղրամյանը պաշտոնը ստանձնել է 2019 թվականի ապրիլի 19-ին. մինչ պաշտոնը ստանձնելը՝ 2018 թվականին, եղել է ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների եւ բնական պաշարների նախարար: Իսկ մինչ կառավարական համակարգ մտնելը Բաղրամյանը եղել է Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի դասախոս եւ հենց այդ տարիներին՝ 2017 թվականին, համատեղ սեփականությամբ ձեռք է բերել բնակարան բազմաբնակարան բնակելի շենքում եւ ավտոտնակ, երկուսն էլ՝ Արաբկիր վարչական շրջանում: ՀԾԿՀ նախագահ դառնալուց հետո՝ 2021 թվականին, Բաղրամյանը եւս մեկ բնակարան է ձեռք բերել՝ անհատական բնակելի տուն Երեւանի Դավիթաշեն վարչական շրջանում: Նա որեւէ տրանսպորտային միջոց չի հայտարարագրել, սակայն կինը, չունենալով որեւէ անշարժ գույք, հայտարարագրել է 2015 թվականին արտադրված, Lexus մակնիշի մեքենա, որը ձեռք է բերվել 2019 թվականին: ՀԾԿՀ նախագահի՝ տարեսկզբին առկա 9 մլն 300 հազար դրամ բանկային հաշիվները տարեվերջին զրոյացել են: Բանկային հաշիվների մնացորդները կազմել են 2 մլն 987 հազար դրամ, կանխիկ դրամական միջոցները՝ 1 մլն 600 հազար դրամ եւ 2 հազար դոլար: Նրա՝ հաշվետու տարվա եկամուտները կազմել են 29 մլն 974 հազար դրամ, որից 18 մլն 655 հազար դրամը՝ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովից: Եկամուտների աղբյուրներից տեղեկանում ենք, որ Բաղրամյանը ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացել է 5 մլն 161 հազար դրամ՝ որպես եկամտահարկի վերադարձ՝ 3 հիփոթեքով բնակարանների՝ բնակարանի, անհատական բնակելի տան, կառուցվող բնակարանի գումարը վճարելու համար: Հիփոթեքով ձեռք բերված բնակարանների հիփոթեքի մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 68 մլն 355 հազար դրամ: Ֆինանսական մյուս աղբյուրները վարկեր են, նվիրատվություն եւ այլ եկամուտներ: Բաղրամյանը հաշվետու տարվա ընթացքում վարկերի մարմանն է ուղղել 24 մլն 223 հազար դրամ, իսկ անշարժ գույքի վերանորոգման համար ծախսել է 3 մլն 700 հազար դրամ գումար: Նրա կինը՝ Զարուհի Բաղրամյանը, բացի մեքենայից, այլ գույք չի հայտարարագրել: Նրա բանկային հաշիվների մնացորդները կազմել են 273 հազար դրամ, կանխիկ դրամական միջոցները՝ 3 հազար դոլար եւ 500 հազար դրամ: Զարուհի Բաղրամյանի կնոջ՝ հաշվետու տարվա եկամուտները կազմել են 1 մլն 098 հազար դրամ, որից 907 հազար դրամը աշխատանքի վարձատրություն է «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ից, իսկ եկամուտների մյուս մասը, որպես այլ եկամտի տեսակ, ստացել է Ֆինանսների նախարարությունից՝ 47 հազար դրամ, եւ ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունից՝ 143 հազար դրամ:

Արցախի ՊԲ նախկին հրամանատար Սամվել Բաբայանը շարունակում է Արցախում իր համար պաշտոններ որոնել. հենց նոր պաշտոն է ազատվում, որոշում է ինքնաառաջադրվել ու պատկերացնել իրեն այդ պաշտոնում: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ օգոստոսի 28-ին Արցախի ԱԺ-ում նախագահ Արայիկ Հարությունյանի գլխավորությամբ բավականին թեժ ու երկարատեւ քննարկում է եղել, որին մասնակցել են Արցախի նախկին նախագահներ Բակո Սահակյանը, Արկադի Ղուկասյանը, «Միասնական հայրենիք» կուսակցության ղեկավար Սամվել Բաբայանը եւ Արցախի պատգամավորները: Ի թիվս անվտանգային եւ հումանիտար հարցերի՝ քննարկվել է նաեւ Արայիկ Հարությունյանի հարցը, որը վերջին օրերին Արցախի քաղաքական թոփ թեման է դարձել: Արցախում Հարությունյանի հրաժարականի մասին խոսակցություններից ամենաշատը ոգեւորվել է Սամվել Բաբայանը. թեեւ հրաժարականի մասին ընդամենը խոսակցություններ են, ու հստակ ոչինչ դեռ չկա, բայց Բաբայանը կրկին ակտիվացել է, քաղաքական ու հասարակական տարբեր շրջանակների հետ հանդիպումներ է ունենում, այսպես ասած, արդեն դիրքավորվել է՝ որպես Արցախի նախագահ: Ինչպես մեր աղբյուրներն են փոխանցում, նախագահների եւ պատգամավորների մասնակցությամբ քննարկման ժամանակ էլ բավականին ակտիվ է եղել ու ոգեւորված հայտարարություններ արել: Ի հեճուկս իր ցանկությունների՝ Սամվել Բաբայանին որպես նախագահի թեկնածու Արցախում չեն դիտարկում, քանի որ հանրային եւ քաղաքական լայն շրջանակների համար նա անընդունելի կերպար է՝ իր «նիկոլական» հայտարարությունների համար: Թե ինչ կլինի հետագայում, ժամանակը ցույց կտա, համենայնդեպս, այս պահին Արայիկ Հարությունյանի հրաժարականի լուրերը դեռ խոսակցությունների մակարդակի են, հստակ ոչինչ չկա, քանի որ նրա հրաժարականը լուրջ վտանգներ է պարունակում: Հարությունյանը ապահովում է Արցախի ինքնիշխանությունը, եւ այս պարզ ճշմարտությունը շատերը Հայաստանում եւ Արցախում չեն գիտակցում:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ քաղաքական իշխանությունները երկու կարեւոր պաշտոնների համար թեկնածու են փնտրում, բայց չեն կարողանում գտնել: Ինչպես հայտնի է, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի առաջարկությամբ եւ ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանի հրամանագրով՝ Արմեն Ավթանդիլյանը ազատվել է ՀՀ ՊՆ զորակոչային եւ զորահավաքային համալրման ծառայության պետի պաշտոնից: Այս մասին նշված է Հանրապետության նախագահի՝ օգոստոսի 25-ի հրամանագրում: Արդեն 5 օր է՝ դեռ չեն կարողանում ուժեղ ու շատ խիստ բնավորության անձի գտնել ու նշանակել ՊՆ զորակոչային եւ զորահավաքային համալրման ծառայության պետ: Իշխանության վերնախավը փնտրտուքի մեջ է, պետք է կարողանան գտնել մեկին, որը կկարողանա համակարգում առկա խայտառակ իրավիճակը կարգի բերել: Իրավիճակը բարդ է նաեւ քրեակատարողական ծառայության պետ գտնելու հարցում: Բանն այն է, որ դեռեւս օգոստոսի 5-ին Սերգեյ Ատոմյանին ազատեցին քրեակատարողական ծառայության պետի պաշտոնից ու մինչ օրս չեն կարողանում գտնել մեկին, որը կկարողանա բանտերում առկա վիճակը կարգավորել: Ստացվում է, որ Նիկոլ Փաշինյանի իշխանությունում չկան մարդիկ, որ այս կարեւորագույն պաշտոններում նշանակումներ կատարվեն, կամ ոչ ոք այլեւս ցանկություն չունի աշխատելու Նիկոլ Փաշինյանի ղեկավարած պետական մարմիններում:

ՀՀ իշխանությունները շարունակում են ճաշկերույթների վրա մեծ գումարներ ծախսել: «Ժողովուրդ» օրաթերթը պաշտոնական փաստաթղթերից տեղեկացավ, որ, օրինակ, ՀՀ վարչապետի աշխատակազմն այս տարվա սկզբից մինչեւ օգոստոսի կեսը ընկած ժամանակում մեկ անձից գնման ընթացակարգով 84.6 մլն դրամ է ծախսել: Նշենք, որ այդ գումարից 11.2 մլն դրամը հատկացվել է հենց այդպիսի ծախսերի վրա՝ «Երեւան հյուրանոց», «Փոյնթ օֆ վյու», «Սալոն ռեստորան», «Սարյան 1 Թրեվլ Քլաբ», «ԷՄ Բի Ջի գրուպ» եւ այլն: Բացի այդ, վարչապետի աշխատակազմը «Արցախ Կարպետ» ընկերությունից ձեռք է բերել «Վիշապագորգ» հուշանվեր՝ 350 հազար դրամ արժողությամբ, 2 «Արցախ» գորգ՝ 610 հազար դրամ արժողությամբ: Մեծ գումար է կազմել մեքենաների ապահովագրությունը: Օրինակ՝ աշխատակազմին սպասարկող 46 ավտոմեքենաների ապահովագրության եւ վերանորոգման համար ծախսվել է մոտ 6.9 մլն դրամ: Հավելենք, որ ընդդիմադիր եղած ժամանակ Նիկոլ Փաշինյանը դաժանաբար քննադատում էր մեկ անձից կատարվող գնումները՝ համարելով կոռուպցիա: Հիմա անում է այն, ինչ քննադատում էր նախկինում:

ԱՆԴՐԱԴԱՐՁ

Ի՞ՆՉ ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ

Արցախում օրերս ակտիվորեն շրջանառվում են նախագահ Արայիկ Հարությունյանի հրաժարականի մասին տեղեկություններ:

Ի՞նչ մտադրություն ունի Արայիկ Հարությունյանը, պատրաստվո՞ւմ է արդյոք հրաժարական տալ, եւ ովքե՞ր են նրա հրաժարականը պահանջողները. այս հարցերի շուրջ «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է Արցախի նախագահի խորհրդական Դավիթ Բաբայանի հետ:

-Մենք կանգնած ենք շատ ծանր խաչմերուկին եւ պիտի անենք հնարավոր ամեն բան, որ ցանկացած որոշում, որը կընդունվի, լինի համապարփակ, լինի լավ մտածված պետական կառույցների եւ լուրջ քաղաքական ուժերի մասնակցությամբ: Սա չպետք է լինի նաեւ գործող նախագահի անձնական էմոցիոնալ որոշումը: Նա այդ իրավունքը չունի, հետեւաբար եթե մենք, հատկապես՝ այդ ծանր պայմաններում, գալիս ենք մի ընդհանուր եզրակացության՝ լինի դա գործող նախագահի լիազորությունների շարունակման, թե դադարեցման վերաբերյալ, սա պետք է լինի համապարփակ: Անթույլատրելի է իրականացնել էմոցիոնալ որոշումներ՝ ինչ-որ պրովոկատորների կամ ինչ-որ անհայտ շրջանակներ սպասարկող անձանց կարիքների հիման վրա, որովհետեւ սրանից կախված է մի ողջ ազգի ճակատագիր:

-Իսկ Դուք տեղյա՞կ եք՝ երբ ու ում կողմից սկսվեցին այս խոսակցությունները: Ովքե՞ր են այն շրջանակները, որոնք ցանկություն ունեն իրավիճակը լարել, ի՞նչ տեղեկություններ ունեք:

-Ժամանակը կգա, ամեն ինչի մասին կխոսենք: Հիմա դրա մասին խոսել պետք չէ: Արցախում բոլորն էլ գիտեն՝ ով ով է: Բոլորի վարկանիշն էլ պարզ է, եւ այստեղ կարեւոր չէ, թե ով է բղավում ամենաուժեղը. բոլորը բոլորին գիտեն, եւ սա լավ է, քանի որ հասարակության համար ամեն ինչ պարզ է: Խնդիրը սրա մեջ չէ: Խնդիրը նրանում է, որ մենք պետք է պահպանենք պետական համակարգը: Այստեղ խնդիրը անհատներն էլ չեն. եթե որոշում է կայացվում, համապարփակ պետք է կայացվի, որ հանկարծ պետական համակարգը չքանդվի:

-Պարո՛ն Բաբայան, երեկ Ադրբեջանը հերթական կեղծ մարդասիրական քայլն է արել եւ Աղդամի ճանապարհով հումանիտար բեռներ է Արցախ ուղարկել: Ի՞նչ մտադրություն ունի Ադրբեջանը՝ ըստ Ձեզ:

-Հասարակությունը շատ վատ է տրամադրված ընդհանուր առմամբ: Գիտե՞ք՝ ինչու. խնդիրը այդ ճանապարհը չէ, այլ այն, որ այդպես չեն անում մարդասիրական օգնությունը: Ռուսաստանը՝ որպես երաշխավոր, եւս պետք կատարի իր վրա վերցված պարտականությունները: Որեւէ պայմանագրում գրվա՞ծ է, որ Ադրբեջանը կարող է օկուպացնել այդ միջանցքը: Ոչ մի տեղ: Հետեւաբար առաջնահերթ պետք է վերականգնվի այդ շնչերակը՝ միջանցքը: Մնացած հարցերը՝ ուզում են ուղարկել, ուզում ենք ընդունել, այլ խնդիր է:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԱՐՁԱԳԱՆՔ

ԹՈՎՄԱՍՅԱՆԸ՝ ⇨ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի՝ ապօրինաբար լիազորությունները դադարեցված նախագահ, անկուսակցական պատգամավոր Թագուհի Թովմասյանը գրում է. «Միջազգային գործընկերներիս ահազանգել եմ, որ Ադրբեջանը խաղաղ բնակիչների է առեւանգել. սա միջազգային տարբեր կոնվենցիաների ուղիղ խախտում է: Դեռ 2021 թվականից ահազանգում եմ ՀՀ իշխանություններին՝ պահանջելով կոնկրետ քայլեր իրականացնել իրավական հավասարակշռությունը վերականգնելու համար:

Ադրբեջանը հարյուրավոր հայերի, այդ թվում՝ Արցախի Հանրապետության նախագահի, արտաքին գործերի նախարարի, բարձրաստիճան մի շարք պաշտոնյաների նկատմամբ վաղուց միջազգային հետախուզում է հայտարարել:

Մինչդեռ ես՝ որպես ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր, ՀՀ նախկին եւ ներկա գլխավոր դատախազներին թե՛ ամբիոնից, թե՛ գրավոր նամակներով բազմիցս դիմել եմ պահանջով՝ հստակ քայլեր իրականացնել Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարության նկատմամբ միջազգային հետախուզում հայտարարելու ուղղությամբ, սակայն այս առումով մինչ օրս ոչ մի քայլ չի իրականացվել:

Եթե ՀՀ իշխանությունները հետախուզում հայտարարեին Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարության նկատմամբ, շարունակական դարձած առեւանգման դեպքերն այսպիսի հանդգնությամբ գուցե չկրկնվեին:

Առեւանգված քաղաքացիները պետք է անհապաղ ազատ արձակվեն, Ադրբեջանն այս հանցավոր վարքագծի համար խստորեն պետք է պատժվի, ՀՀ իշխանություններն, ի վերջո, պետք է գործեն՝ ի շահ հայի եւ հայկական երկու պետությունների:

Հ. Գ. Գլուխս հնչեցրել եմ 2021 թ. մարտի 23-ին»:

ՇԱՌԼ ՄԻՇԵԼԻՆ ՈՒ ԱՐՑԱԽԸ

Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելը Կանադայի արտաքին գործերի նախարար Մելանի জոլիի հետ քննարկել է Լեռնային Ղարաբաղի հարցը: Այս մասին X-ի (նախկին՝ Twitter) էջում հայտնել է նախարար জոլին:

Նա նշել է, որ հանդիպման ժամանակ անդրադարձ են կատարել տարբեր տարածաշրջաններում առկա հարցերի:

«Մենք քննարկել ենք Բալկաններում ընդլայնվելու նրա տեսլականը, Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը եւ Հայիթիի ճգնաժամի կարգավորմանն ուղղված հետագա քայլերը»,- գրել է նախարար জոլին:

Նա շեշտել է, որ այս զրույցներն առանցքային են գործընկերային աշխատանքի համար:

Նշենք նաեւ, որ հանդիպումը կայացել է Բլեդի ռազմավարական համաժողովի շրջանակներում, որին մասնակցում է նաեւ ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը:

ՀԱՅՏԱՐԱՐԵՑ ՆԱԽԱԳԱՀԸ

Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանն անցած գիշեր Ազգային ժողովում ավելի քան 6 ժամ խորհրդակցություն է անցկացրել, որից հետո Վերածնունդի հրապարակում հավաքվածներին ներկայացրել է այդ քննարկման արդյունքները: Նա հայտնել է, որ քննարկվել է 3 հարց՝ անցակետից երեկ առեւանգված 3 երիտասարդների ճակատագիրը, հացի խնդիրն ու առաջիկա օրերին իր հնարավոր հրաժարականի հարցը: Նա նշել է, որ 6 ժամ տեւած քննարկման արդյունքում միասնական որոշման հասնել չեն կարողացել: «Այսօր քննարկվել է նաեւ նախագահի պաշտոնում իմ մնալ-չմնալու հարցը: Վաղը, մյուս օրը ավելի նեղ կազմով կորոշենք՝ եթե պետք լինի, ես հրաժարական տամ»,-ասել է Հարությունյանը:

ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ ԲԴԽ նախկին նախագահ Ռուբեն Վարդազարյանը Հակակոռուպցիոն կոմիտե է հրավիրվել՝ հարցաքննության: Նրա հարցաքննությունը տեւել է 10 րոպե, որի ընթացքում նա ասել է՝ ինչ ցուցմունք տվել է նախկինում, պնդում է, ապա հեռացել է կոմիտեից: Հիշեցնենք, որ 2022թ. հունիսի 20-ին Ռուբեն Վարդազարյանը հրավիրած ասուլիսում աղմկահարույց ձայնագրություն էր հրապարակել, որով հիմնավորվում էր, որ ԲԴԽ նախագահի պաշտոնակատար Գագիկ জհանգիրյանը փորձել է պարտադրել Վարդազարյանին հրաժարական տալ: Աղմկոտ զրույց-պահանջը տեղի էր ունեցել ընթրիքի սեղանի շուրջ, որին ներկա են եղել ոչ միայն Վարդազարյանն ու জհանգիրյանը, այլ նաեւ ԲԴԽ անդամ Ստեփան Միքայելյանը: Հրապարակված ձայնագրությունից հետեւում էր, որ Վարդազարյանին վարչապետի անունից առաջարկվել է հրաժարական տալ, իսկ জհանգիրյանն էլ ստանձնել է միջնորդի դեր՝ երաշխավորելով, որ նրա նկատմամբ հետապնդումներ չեն իրականացվի, եթե հրաժարական ներկայացնի: জհանգիրյանը Հանրայինի եթերում անձամբ խոստովանել է, որ բանակցություններ իսկապես վարել է Վարդազարյանի հետ՝ հրաժարական տալուն տրամադրելու համար:

Ավելին՝ հայտարարել է, որ ԲԴԽ նախագահին հրաժարական պարտադրելն այնքան էլ հեշտ գործ չէ, ու ինքը հոգեբանական հնարքներ է կիրառել, «կուտ տվել»: Աղմկահարույց ձայնագրությունից եւ առավել անհասկանալի հարցազրույցից օրեր անց հայտարարվեց, թե Գագիկ জհանգիրյանն ունի առողջական խնդիրներ եւ ենթարկվել է վիրահատության: Ակնառու էր, որ জհանգիրյանը այդ խայտառակ ձայնագրությունից հետո առողջական խնդիրների քողի ներքո պատրաստվում էր հրաժարական տալ: Եւ, ահա, հուլիսի 1-ին արդեն պաշտոնապես հաստատվեց জհանգիրյանի հրաժարականը: ՀՀ քննչական կոմիտեում նշված ձայնագրության կապակցությամբ նախապատրաստված նյութերով նախաձեռնվել էր քրեական վարույթ, որը դեկտեմբերին կարճվել էր՝ հանցանքի բացակայության հիմքով: ՔԿ-ում վկայի կարգավիճակով վարույթի շրջանակներում հարցաքննվել են նաեւ ԲԴԽ արդեն նախկին անդամներ Ստեփան Միքայելյանը, Սերգեյ Չիչոյանը եւ ԲԴԽ անդամ Վիգեն Քոչարյանը: Ընդ որում՝ վերջին երկուսի նկատմամբ քրեական հետապնդում չհարուցելու որոշում էր կայացվել: Նշված որոշման դեմ Վարդազարյանը բողոք էր ներկայացրել, սակայն մինչ բողոքը կստացվեր, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Արթուր Պողոսյանը սեփական նախաձեռնությամբ վերացրել էր քննիչի որոշումը՝ ըստ քննչական ենթակայության գործը Հակակոռուպցիոն կոմիտե ուղարկելու որոշում կայացնելով: Միեւնույն ժամանակ դատախազն արձանագրել է, որ նախաքննության ավարտ հայտարարելուց հետո ժամկետները չեն պահպանվել, քանի որ ավարտ հայտարարելու մասին տեղեկացնելուց հետո քննիչը ժամանակ չի տրամադրել բողոքարկման համար: Վարույթը Հակակոռուպցիոն կոմիտե տեղափոխվելուց հետո փաստացի սառեցված վիճակում պահվել է երեք ամիս, ապա՝ կարճվել՝ հանցանքի բացակայության հիմքով: Գործի վարույթը կարճելու որոշումը դատական կարգով վիճարկվել է: Արդյունքում Հակակոռուպցիոն դատարանը՝ դատավոր Մերի Մոսինյանի նախագահությամբ, բավարարել է Վարդազարյանի ներկայացուցիչների բողոքը՝ վերացնելով գործի վարույթը կարճելու որոշումը: Դատական ակտը չի վիճարկվել ոչ դատախազության, ոչ քննիչի կողմից, ըստ այդմ դատական ակտն օրինական ուժի մեջ է մտել: Այժմ վարույթը վերսկսվել է:

ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԹԵԺ ՀԱՆԴԻՊՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ երեկ՝ ողջ օրը, Արցախում լարված է եղել: Արցախի ԱԺ-ում երեկ երեկոյան ընդլայնված քննարկում է եղել, որին մասնակցել են Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանը, Արցախի Հանրապետության նախկին նախագահներ Բակո Սահակյանը, Արկադի Ղուկասյանը, «Միասնական հայրենիք» կուսակցության առաջնորդ Սամվել Բաբայանը եւ արցախցի պատգամավորները: Ընդլայնված հանդիպմանը քննարկվել է արցախցի երիտասարդների՝ նախօրեի առեւանգումը Հակարիի կամրջի մոտից, որը վերջին շրջանում հաճախակի բնույթ է կրում, քննարկվել են անվտանգային հարցերը, ստեղծված հումանիտար ճգնաժամը, ինչպես նաեւ նախագահ Արայիկ Հարությունյանի հրաժարականի հարցը:

Ինչպես Արցախի մեր աղբյուրներն են հայտնում, նախկին նախագահները եւ պատգամավորների մեծամասնությունն իրենց դիրքորոշումն են հայտնել, որ անվտանգային լարված իրավիճակում նախագահի հրաժարականը տեղին չէ, քանի որ իրավիճակը կարող է ավելի լարվել դրանից հետո: Վերջնական որոշումը, ամեն դեպքում, Արայիկ Հարությունյանինն է, բայց վերջինս դեռ իր որոշման մասին չի հայտնել: Մեր աղբյուրների փոխանցմամբ՝ Հարությունյանն այս օրերին տարբեր շրջանակների հետ հանդիպումներ է ունենում, ակտիվ քննարկումների մեջ է եւ առաջիկայում իր որոշման մասին կհայտնի:

Արցախի նախագահների եւ պատգամավորների մասնակցությամբ այս քննարկումը տեւել է մինչեւ լուսաբաց եւ բավականին թեժ է անցել: Իրավիճակն այդ ընթացքում լարված է եղել նաեւ Արցախի ԱԺ բակում, որտեղ մի խումբ ցուցարարներ պահանջում էին Արայիկ Հարությունյանի հրաժարականը: Քննարկումից հետո Արայիկ Հարությունյանը հանդիպել է ցուցարարների հետ, նրանց հարցերին պատասխանել ու խոստացել առաջիկայում նորից հանդիպել նրանց հետ:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՀԵՌԱԽՈՍԱԶՐՈՒՅՑ ԵՆ ՈՒՆԵՑԵԼ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը հեռախոսազրույց է ունեցել Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի հետ: Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում են Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմից:

Զրուցակիցներն անդրադարձել են տարածաշրջանում առկա իրադրությանը:

Վարչապետ Նիկոլ Փաշինյանն ընդգծել է Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքի ապօրինի արգելափակման հետեւանքով Լեռնային Ղարաբաղում հումանիտար ճգնաժամի օրեցօր խորացումը, ինչպես նաեւ շեշտել դրա հաղթահարմանն ու լուծմանն ուղղված քայլերի անհրաժեշտությունը:

Զրուցակիցներն ընդգծել են տարածաշրջանում կայունության ու խաղաղության ապահովման ուղղությամբ հետեւողական ջանքերի կարեւորությունը:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿԲՈՐԴ ՀՐԱՇՔ, ԹԵ՞ ԱՂԵՏ

«Լույս» հիմնադրամը վերլուծություն է հրապարակել 2018թ. տեղի ունեցած իշխանափոխության արդյունքում իրավիճակի շրջադարձային փոփոխության ենթարկված Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացի վերաբերյալ, որում, մասնավորապես, ասվում է, որ 2018թ. տեղի ունեցած իշխանափոխության արդյունքում իրավիճակի շրջադարձային փոփոխության ենթարկված Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացի վերլուծությունը ցույց է տալիս, որ Հայաստանի նոր իշխանությունների՝ սեփական (զրոյական) կետից կարգավորման գործընթացը կառուցելու մոլուցքը հանգեցրեց Ռուսաստանը, Միացյալ Նահանգներն ու Ֆրանսիան ներկայացնող ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների միջնորդությամբ ընթացած 30-ամյա կարգավորման ձեւաչափի, 2007թ.-ից մինչեւ 2021թ. կիրառված սկզբունքների ու այդ ընթացքում արձանագրված ձեռքբերումների (միջազգային իրավունքի սկզբունքների հիման վրա կառուցված բանակցային բանաձեւ ու դրա հիման վրա մշակված փաստաթուղթ) խափանմանը եւ առիթ դարձավ 2020թ. ադրբեջանաթուրքական ագրեսիայի համար:

Հայաստանի իշխանությունները, հրադադարի հաստատման գործընթացի հետաձգումով շարունակաբար թուլացնելով դիրքերը, ստիպված եղան հանուն դրա հաստատման ստորագրել բազմաթիվ թերություններ ունեցող եւ միջազգային իրավունքի տեսակետից որեւէ արժեք չունեցող՝ նոյեմբերի 9-ի հայտարարությունը՝ անգամ ստանձնելով իրենց լիազորություններից դուրս գտնվող պարտավորություններ:

Հայաստանի Հանրապետության եւ Արցախի Հանրապետության համար մարդկային, տարածքային, նյութական, բարոյական ու հոգեբանական աղետալի հետեւանքների հանգեցրած այդ ագրեսիայի ընթացքում կոպտորեն ոտնահարվել են միջազգային իրավունքի սկզբունքներ ու նորմեր, իրականացվել են պատերազմական հանցագործություններ, ինչը պատերազմական գործողությունների դադարեցումից հետո հայկական կողմերից պահանջում էր համապատասխան աշխատանքներ ծավալել միջազգային ատյաններում այդ հանցագործությունների փաստաթղթավորման նպատակով: Անհրաժեշտ աշխատանքը հնարավորություն կտար կարգավորման գործընթացը վերադարձնել Մինսկի խմբի շրջանակներ, անհապաղ գործարկել բանակցային փաստաթղթով նախատեսված Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակի որոշման մեխանիզմը՝ զսպելու համար Ադրբեջանի ագրեսիվ գործողություններն ու կանխելու հետագա զանգվածային հանցագործություններն ինքնորոշված Արցախի նկատմամբ, ինչպես դա տեղի է ունեցել Արեւելյան Թիմորում, Հարավային Սուդանում եւ այլն: Միաժամանակ դա կզսպեր Ադրբեջանի շարունակական ագրեսիան ու հիմք կդառնար իրական խաղաղության համար:

Հայաստանի իշխանությունների ռազմավարական սխալները շարունակվեցին հրադադարի հաստատումից հետո նույնպես: Ենթարկվելով Ադրբեջանի նոր ագրեսիային 2022թ. սեպտեմբերին, այս անգամ արդեն՝ Հայաստանի Հանրապետության տարածքի կորուստներով՝ նրանք զրոյական կետի հասցրին հայկական գործոնը ոչ միայն Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացում, այլեւ Ադրբեջանի հետ հարաբերությունների առնչությամբ կազմակերպվող եռավեկտոր հանդիպումների ընթացքում, որոնք նախաձեռնել են Մոսկվան, Բրյուսելը, Վաշինգտոնը: Հանդիպումները, որոնք կողմերը համարում են «բանակցություններ», որեւէ միջազգային կազմակերպության հովանու ներքո չեն իրականացվում, դրանց չեն մասնակցում միջնորդական առաքելություններ, դուրս են մղել ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ձեւաչափը, օրակարգը, սկզբունքներն ու խնդիրները, իրականացվում են կեղծ «գաղափարների», միջազգային իրավունքում որեւէ նշանակություն չունեցող՝ 1991թ. Ալմա-Աթայի հռչակագրին հղումներով՝ դառնալով քաղաքական մանիպուլյացիաների հարթակներ: Արդյունքում Հայաստանի Հանրապետությունը հայտնվել է ծանր անվտանգային մարտահրավերների առջեւ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը՝ ցեղասպանության: Դրան է տանում նաեւ միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներն ու նորմերը ոտնահարող «պետք է ապահովել Լեռնային Ղարաբաղի բնակիչների իրավունքների հարգումն ու անվտանգությունը» մոտեցումը, որը փորձում են պարտադրել պաշտոնական Երեւանը, Մոսկվան, Վաշինգտոնը, Բրյուսելը:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱԴՐԲԵՋԱՆԻՑ՝ ԱՐՑԱԽԻՆ

Ադրբեջանը երկու բեռնատարով 40 տոննա ալյուր է ուղարկում Արցախ Աղդամ-Ստեփանակերտ ճանապարհով:

Այս մասին հայտնում են ադրբեջանական լրատվամիջոցները, սակայն չի հստակեցվում՝ արդյոք համաձայնություն է ձեռք բերվել Արցախի իշխանությունների հետ:

Ադրբեջանի պատգամավոր Նովրուզ Ասլանն էլ ասել է, թե դրական արձագանք են ակնալում «Ղարաբաղի հայերից»:

ՏԵՍԱՆԿԱՐԱՀԱՆՈՂ ՍԱՐՔ

Ճանապարհային ոստիկանությունը տեղեկացնում է, որ հաշվի առնելով ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովման բնագավառի օրենսդրության պահանջների խախտումների մեծաքանակ լինելը, որոնք խցանումների եւ վթարային իրադրության առաջացման պատճառ են հանդիսանում, «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի կարգով՝ Երեւան քաղաքի Քոչինյան-Բուզանդի փողոցների խաչմերուկներում տեղադրվել է տեսանկարահանող սարք:

Տեսանկարահանող սարքը գործարկվելու է 2023 թվականի սեպտեմբերի 4-ից:

Ճանապարհային ոստիկանությունը հորդորում է վարորդներին պահպանել ճանապարհային երթեւեկության կանոնները:

ԿԱՆԱՅՔ՝ ԲԱՆԱԿՈՒՄ

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության նախաձեռնությամբ՝ կյանքի է կոչվել 18-27 տարեկան իգական սեռի ներկայացուցիչների՝ կամավոր հիմունքներով պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ծրագիրը:

ՊՆ-ից տեղեկացնում են, որ ծառայության ժամկետը 6 ամիս է, որի ընթացքում ծրագրի մասնակիցները ծառայում են բացառապես ուսումնական զորամասում:

Վեցամսյա ժամկետը լրանալու կամ մինչեւ լրանալն առողջական վիճակի պատճառով վաղաժամկետ զորացրվելու դեպքում մասնակիցները կստանան պատվովճար՝ 6 ամիսը լրիվ ծառայելու պարագայում՝ 1 միլիոն դրամ, իսկ վաղաժամկետ զորացրվելու դեպքում՝ նշված գումարը վեց ամսվա բաժանելու եւ փաստացի ծառայած ամիսների թվով բազմապատկելու արդյունքում ստացված չափով:

6-ամսյա ժամկետը լրանալուց հետո մասնակիցները կարող են ծառայությունը շարունակել «Պաշտպան հայրենյաց» ծրագրով եւ անցնել 5 տարի ժամկետով պայմանագրային զինվորական ծառայության՝ այդ դեպքում, բնականաբար, օգտվելով «Պաշտպան հայրենյաց» ծրագրի բոլոր արտոնություններից:

ԿԺԱՄԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆ

Ֆրանսիայի մայրաքաղաք Փարիզի եւ մի շարք խոշոր շրջանների կողմից Լեռնային Ղարաբաղի համար ուղարկված մարդասիրական բեռով բեռնատարների շարասյունն օգոստոսի 30-ին կլինի Լաչինի միջանցքի մուտքի մոտ, որտեղ այս պահին Լեռնային Ղարաբաղ մուտքին է սպասում նաեւ Հայաստանի ուղարկած մարդասիրական օգնության շարասյունը: Ֆրանսիայի հայկական կազմակերպությունների համակարգող խորհուրդը հայտնում է, որ օգոստոսի 30-ին Հայաստան է ժամանելու Փարիզի քաղաքապետ Ան Իդալգոն, որը կուղեկցի Երեւանից դեպի Լաչինի միջանցք ուղեւորվող շարասյունը:

ՄԵՂԱԴՐԱՆՔ

ԱՄՈՒՍԻՆԸ՝ ԿՆՈՋ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՎ

Քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչությունում ավարտվել է ամուսնու կողմից կնոջ սպանության դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետով նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը:

«Ժողովուրդ» օրաթերթին ՔԿ-ից հայտնում են, որ իրականացված քննչական եւ վարութային անհրաժեշտ գործողությունների արդյունքում պարզվել են դեպքի հանգամանքները:

Մասնավորապես՝ 2022 թվականի դեկտեմբերի 25-ին՝ ժամը 08:53-ին, Վանաձոր քաղաքի բնակիչը զանգահարել է ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչություն եւ հայտնել, որ սպանել է իր կնոջը:

Դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթով փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ նշված օրը՝ ժամը 08:45-ի սահմաններում, ամուսինը իրենց տան բակում գտնվող տաղավարում անձնական հարցերի շուրջ վիճաբանել է իր կնոջ հետ, որի ընթացքում խոհանոցային դանակով 2 անգամ հարվածել է վերջինիս պարանոցի շրջանին՝ պատճառելով կյանքի հետ անհամատեղելի մարմնական վնասվածքներ:

Նշենք, որ քննությամբ տվյալներ են ստացվել այն մասին, որ տղամարդը դեռեւս 2021 թվականից տառապում է խրոնիկական հոգեկան հիվանդությամբ, ինչը հաշվի առնելով՝ վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ՝ նրա նկատմամբ նախաքննության ընթացքում նշանակվել են համալիր ստացիոնար դատահոգեբուժական եւ դատահոգեբանական, ինչպես նաեւ կրկնակի համալիր հանձնաժողովային դատահոգեբուժական եւ դատահոգեբանական փորձաքննություններ:

Ըստ փորձագիտական եզրակացության՝ մեղադրյալը հանցանքը կատարելու պահին թեեւ ֆորմալ հասկացել է իր գործողությունների հակահիրավական բնույթը, դրանց քրեորեն պատժելիությունը, սակայն հաշվի առնելով նրա մոտ հուզակամային արտահայտված խանգարումները, զառանցական գաղափարների առկայությունը, դրանց հետեւանքով հոգեկան գործունեության ապակազմակերպվածությունը, իր մղումների նկատմամբ կամային վերահսկողության թուլությունը, իր գործողությունների նկատմամբ կամային եւ ինտելեկտուալ վերահսկողություն իրականացնելու կարողությունների բացակայությունը եւ այլ գործոններ՝ նա չէր կարող գիտակցել եւ հաշիվ տալ իրեն իր գործողությունների համար եւ ղեկավարել դրանք: Ուստի մեղադրյալն արարքը կատարելու պահին գտնվել է անմեղսունակության վիճակում:

Հավելենք, որ հաշվի առնելով դեղորայքային բուժման ֆոնի վրա պահպանվող ակտուալ հոգեախտաբանական ախտանիշները, վարքային դրսեւորումները, միտումները, հակասոցիալական վարքագիծը՝ նա բարձր սոցիալական վտանգավորություն է ներկայացնում, կարիք ունի հարկադրական բուժման հատուկ տիպի հոգեբուժական հիվանդանոցային պայմաններում:

2023 թվականի ապրիլի 13-ին դատարանի կողմից որոշում է կայացվել քրեական վարույթը բժշկական հարկադրանքի վարույթի փոխակերպելու մասին: Մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանքը վերացվել է, եւ նույն օրը նրա նկատմամբ որպես անվտանգության միջոց է կիառվել բժշկական հսկողությունը:

Նախաքննությունն ավարտվել է, եւ վարույթի նյութերն ուղարկվել են հսկող դատախազին:

ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՄՄԵՐԸ»՝ ՔՆՆԻՉՆԵՐԻ ՄՈՏ

Երեւանի կենտրոնում շրջող «Համմեր»-ի «անորսալի» վարորդի գործը կքննի դատավոր Մասիս Մելքոնյանը: Նկատենք, որ գործը դատարանում է, սակայն քննիչները «Համմեր» մեքենան դեռ հետ չեն վերադարձել Գեղամ Սահրադյանի հորը՝ նշելով, որ մեքենայի մեջ դատրոն կա:

Հիշեցնենք, որ 2023թ. փետրվարի 11-ին Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական առաջին բաժին հաղորդում էր ստացվել այն մասին, որ փետրվարի 10-ին՝ ժամը 23:30-ի սահմաններում, Հանրապետության հրապարակում Պարեկային ծառայության ծառայողներին է մոտեցել «Համմեր» մակնիշի ավտոմեքենա, որի վարորդը մեքենան լիցքավորելու համար գումար է պահանջել պարեկներից:

Մերժում ստանալուց հետո, բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսեւորելով հասարակության նկատմամբ, նա մեքենան վարել է Աբովյան փողոցով՝ երթեւեկությանը հանդիպակաց, չի ենթարկվել ոստիկանության ծառայողների «կանգ առ» ազդանշանին, մեքենան շարունակել է վարել Արամի, Փ. Բուզանդի, Վ. Սարգսյանի, Ագանթագեղոսի, Տիգրան Մեծի, Ամիրյան փողոցներով, այդ թվում նաեւ՝ հետիոտնի համար նախատեսված վայրով՝ դիտավորյալ վնասելով փողոցներում կայանված թվով 8 քաղաքացիական մեքենաներ:

Այնուհետեւ նա երթեւեկել է ՀՀ կառավարության վարչական շենքի հանդիպակաց՝ ոչ երթեւեկելի հատվածով, որտեղ, շարունակելով չենթարկվել պարեկային ծառայության օրինական պանաջին, վրաերթի է ենթարկել Պարեկային ծառայության աշխատակցին, դիտավորյալ վնասել Պարեկային ծառայության թվով 3 ավտոմեքենա:

Այդ գործողությունները կանխելու համար պարեկային ծառայողներն իրենց ամրակցված ատրճանակներով մոտ տարածությունից մի քանի անգամ կրակել են վերոհիշյալ ավտոմեքենայի անվադողերի ուղղությամբ՝ փորձելով կանգնեցնել այն, սակայն վարորդը շարունակել է երթեւեկությունը, խույս տալով պարեկներից՝ մեքենան թողել է Երեւան քաղաքի Ագաթանգեղոս 7-րդ շենքի կամարանցման տակ եւ դիմել փախուստի:

Վարութային գործողությունների արդյունքում պարզվել է, որ «Համմեր» մակնիշի ավտոմեքենան պատկանում է Արարատի մարզի բնակիչ Գեղամ Ս.-ին, որը եղել է ենթադրաբար թմրանյութի ազդեցության տակ:

Պարզվել էր, որ տեղյակ լինելով որդու՝ թմրամոլ լինելու մասին՝ հայրն ավտոմեքենայի բանալիները թաքցրել է նրանից, սակայն երիտասարդը փնտրել ու գտել է ավտոմեքենայի պահեստային բանալին, որից հետո ավտոմեքենայով մարզից եկել է Երեւան քաղաք:

«Համմերը» քննիչները հետ չեն տվել՝ նշելով, որ «փորձագետը պետք է գա, պատրոն կա, միջից հանի»:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՈՒՇԱԳՐԱՎ

ՄԵՂԱԴՐԱՆՔ՝ ՁԻՆՎՈՐԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Մազման Գրիգորյանին մեղադրանք է առաջադրվել:

Բանն այն է, որ նա, հանդիսանալով ՊՆ N զորամասի 2-րդ հրաձգային գումարտակի պարտադիր ժամկետային զինծառայող, 23.09.2021 թվականին մարտական դիրքի վրանում վառարանը վառելու նպատակով բենզինով լի տարայից լցրել է վառելանյութի վրա, բացել վառարանի դուռը եւ փորձել վառելանյութը դնել վառարանի մեջ:

Այդ ժամանակ վառարանից բոց է առկայծվել ու հրդեհ բռնկվել, որի հետեւանքով այրվել է վրանը, առաջացրել են ծանր հետեւանքներ՝ պետությանը պատճառվել է 29.147.381,92 ՀՀ դրամի նյութական վնաս:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀՐԱՎԻՐՎԵՑԻՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

Երեւանում արագաչափերի եւ լուսացույցների սպասարկումն իրականացնող «Սեքյուրիթի Դրիմ» ընկերության հիմնադիր տնօրեն Ալեքսան Զաքարյանը, նրան փոխկապակցված եւս մի քանի անձ՝ Գայանե Վերդյանը, դստրերը՝ Աստղիկ եւ Տաթեւիկ Ղազարյանները, հրավիրվել են Հայաստանի Հանրապետության դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչություն: Azdarar.am կայքում նշվում է, որ նրանց պատկանող գույքերի վերաբերյալ իրականացվել է ուսումնասիրություն, կազմվել են ամփոփագրեր:

Ըստ ծանուցագրերի՝ հիշյալ անձինք դատախազություն պետք է ներկայանան սեպտեմբերի 4-ին:

Քննությամբ պարզվել է, որ 2017 թվականի փետրվարի 15-ին ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության եւ «Սեքյուրիթի Դրիմ» ՍՊ ընկերության միջեւ կնքվել է ՀՀ-ին պատկանող, երթեւեկության նկատմամբ հսկողություն իրականացնող համակարգերի հավատարմագրային կառավարման պայմանագիր, որով սահմանվել է, որ «Սեքյուրիթի Դրիմ» ՍՊ ընկերությունը վարձատրվում է ճանապարհային երթեւեկության կանոնների պահպանման նկատմամբ տեխնիկական հսկողության համակարգերի միջոցով հայտնաբերված իրավախախտումների համար նշանակված տուգանքների փաստացի գանձումների գումարի եւ կրած ծախսերի համար հատուցման ենթակա գումարների տարբերության 10 տոկոսի չափով:

Պետությանը պատճառված վնասի՝ ընդհանուր 770.960.963 ՀՀ դրամ գումարից 290.327.078 ՀՀ դրամը նախաքննության ընթացքում համահիմնադիրների կողմից հատուցվել է, իսկ դեռեւս չհատուցված մասով չորս մեղադրյալների գույքերի եւ «Սեքյուրիթի Դրիմ» ՍՊԸ-ի ֆինանսական միջոցների վրա դրվել են կալանքներ:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ օգոստոսի 28-ից 29-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 54 դեպք, որոնցից 4-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՄԵՂՔԸ՝ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՎՐԱ

Դիլիջանի ոլորաններում՝ միջպետական ավտոճանապարհի եզրին, էքսկավատորով քերել են դարավանդը եւ սննդի, առեւտրի բազում օբյեկտներ սարքել: Շրջակա միջավայրի նախարար Հակոբ Սիմիդյանին գրավոր հարցում եմ ուղարկել, թե բնության հատուկ պահպանվող տարածք հանդիսացող Դիլիջանի ազգային պարկի տարածքում ով է թույլատրել այդ օբյեկտների կառուցումը: Նախարարությունից ստացված պատասխանում նշված է. «Դիլիջանի ոլորաններում գտնվող, մեծ տարածքներ զբաղեցնող առեւտրի կրպակները գտնվում են համայնքային հողերում, իսկ փոքրիկ վաճառակետերը տեղադրված են ճամփեզրին շատ մոտ եւ սահմանակից են ազգային պարկին»:

«ՈՄԿԵ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ»՝ ԻՋԵՎԱՆՈՒՄ

Օգոստոսի 26-ին վարչապետ Նիկոլ Փաշինյանը Տավուշի մարզկենտրոն Իջեւանում ծանոթացել է ներքաղաքային 500 մետր ավտոճանապարհի ավարտված աշխատանքներին: Դրանք իրականացվել են սուբվենցիոն ծրագրերի շրջանակում, ներդրվել է 80 միլիոն դրամ: Ընդամենը 500 մետր ճանապարհի նորոգելու համար 80 միլիոն դրամ են ծախսել. ճանապարհը ոսկո՞ւց է: Մայիսյան կամուրջ-Սարիգյուղ 6,9 կիլոմետր բարվոք վիճակում գտնվող ավտոճանապարհի նորոգման համար պետական բյուջեից ծախսում են 938 միլիոն դրամ: Այդտեղ ճանապարհ չեն կառուցում, բարվոք վիճակում գտնվող միջպետական ճանապարհին ասֆալտի 2 շերտ են փռելու, ճանապարհի եզրին ջրահեռացման առուներ սարքելու եւ դրա համար հսկայական գումար՝ 938 միլիոն դրամ են ծախսելու: Ինչպես 2019 թվականին Նիկոլ Փաշինյանն էր կառավարության նիստին խոստովանել, իրենք ասֆալտ շատ են սիրում: Հատկանշական է, որ իրենք ասֆալտապատում սիրում են «նախկինների» հետ. Մայիսյան կամուրջ-Սարիգյուղ ավտոճանապարհը նորոգում է «Սիսիանի Բուատ» ՍՊԸ-ն որը կապվում է ՀՀԿ-ական Հերմինե Նաղդալյանի հետ: Հետագայում Նաղդալյանը դուրս է եկել ընկերությունից, իր բաժնեմասը փոխանցել այլ անձանց:

ԴՊՐՈՑՆԵՐ՝ ԱՌԱՆՑ ԶԻՆՂԵԿԻ

Նոր ուսումնական տարում հանրակրթական դպրոցներում աշխատելու հնարավորություն չեն ունենա այն զինղեկները, որոնք ունեն միջնակարգ կրթություն: Նոյեմբերյան համայնքի դպրոցներում 3 զինղեկ կա, որոնք չունեն բարձրագույն կրթություն: Նոյեմբերյան համայնքի Արճիս գյուղի միջնակարգ դպրոցի զինղեկը, որը չունի բարձագույն կրթություն, 35 տարի դպրոցում զինղեկ է աշխատում: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում եմ ուղարկել՝ նրան հարցնելով՝ Տավուշի մարզի հանրակրթական 76 դպրոցներում միջնակարգ կրթությամբ քանի զինղեկ է աշխատում, նրանցից քանիսն է հայտ ներկայացրել մասնակցելու կամավոր ատեստավորմանը, քանիսն է ազատվել աշխատանքից: Մարզպետը տեղեկատվական հարցումիս դեռ չի պատասխանել:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ՝ ԵՐԵՎԱՆՈՒՄ

«Ժողովրդի ձայնը» փորձագիտական ակումբը, Երեւանի ավագանու ընտրություններին ընդառաջ, մոնիթորինգ է իրականացրել՝ նվիրված քարոզարշավի մեկնարկին ու քաղաքական ուժերի ստարտային հնարավորություններին:

Ըստ այդմ՝ ակումբի փոկուս խմբերն արձանագրել են, որ նախընտրական քարոզարշավի մեկնարկը բավականին պասիվ է տրվել, ընտրություններին մասնակցության հայտ ներկայացրած քաղաքական ուժերի միջեւ ընտրապայքարը դեռեւս այդքան էլ դինամիկ ընթացք չունի, նախընտրական քարոզարշավի առաջին շաբաթվա ընթացքում ակնհայտ է ոչ միայն ուժերի, այլեւ երեւանցիների պասիվությունը: Փորձագետներն արձանագրում են, որ, ըստ քարոզարշավի առաջին շաբաթվա արդյունքների, քաղաքական ուժերը դեռեւս չեն կարողացել գրավել երեւանցիների հետաքրքրությունն ու իրենց օրակարգով գրավել նրանց ուշադրությունը:

Քաղաքական ուժերն էլ, կարծես, ջանք չեն գործադրում այդ պասիվ հետաքրքրությունը կոտրելու, ակտիվացնելու քաղաքական գործընթացը: Որոշ ուժեր փորձում են արտաքին քաղաքական աստառ տալ երեւանյան գալիք ընտրություններին, անգամ հակառուսական տրամադրություններ գեներացնել, օրինակ՝ Տիգրան Խզմալյանը քարոզարշավն անցկացնում է ԵՄ դրոշով, իսկ «Հանրապետություն» կուսակցության առաջնորդ Արամ Սարգսյանը քարոզարշավի ընթացքում դարձյալ բարձրաձայնում է ՀՀ-ի՝ ՀԱՊԿ-ից դուրս գալու հարցը: Որպես նրանց հակակշիռ՝ օրինակ՝ «Հանուն սոցիալական արդարության» կուսակցությունը ներկայանում է որպես հայ-ռուսական հարաբերությունների զարգացման ու ամրապնդման ջատագով:

Նշենք նաեւ, որ մոնիթորինգ իրականացրած փորձագետները նշում են, որ ծրագրային առումով քաղաքական ուժերի մեծ մասի մոտ գերակշռում է պոպուլիզմը, իրական խնդիրները չեն արտացոլվում, եւ երեւանցիներին չեն ներկայացվում նրանց հուզող խնդիրների լուծումները, փոխարենը այլընտրանքային իրականություն է հրամցվում՝ դժվար իրականացվելիք ծրագրերով: Այդպես, իշխանության թեկնածուն խոստանում է ամեն տարի մետրոյի նոր կայարան բացել, մեկ այլ թեկնածու խոսում է տրանսպորտն անվճար դարձնելու մասին, եւ նմանատիպ այլ խոստումներ են հնչում: Մինչդեռ, ինչպես վկայում են փորձագիտական ակումբի հարցումները երեւանցիների շրջանում, նրանց հետաքրքրում են այնպիսի խնդիրների լուծումներ, ինչպիսիք են ջրամատակարարումը, աղբահանությունը, Երեւանի օդի աննախադեպ աղտոտվածության մակարդակն ու դրա դեմն առնելու ուղիները, փողոցների բեռնաթափումը, տրանսպորտի խնդիրը եւ այլն: Նաեւ երեւանցիներին շատ հետաքրքրում է առողջապահական ոլորտին առնչվող հարցերը, մանկապարտեզների խնդիրը, քանզի ոչ բոլոր երեխաներն են կարողանում հաճախել պետական մանկապարտեզներ անգամ տարիներով հերթագրված լինելու պարագայում: Այս հարցերն են, որ առաջնային նշում են երեւանցիները հարցումների ժամանակ:

Հավելենք նաեւ, որ հարցումներն իրականացվել են Երեւանի բոլոր համայնքներում շուրջ 1200 երեւանցիների շրջանում:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ՔՈՎԻԴԻ ԹՎԵՐՆ ԱՃԵԼ ԵՆ ⇨

Կորոնավիրուսային վարակով հիվանդացությունը վերջին շաբաթվա ընթացքում Ռուսաստանում աճել է գրեթե 20 %-ով. աճ է գրանցվել 46 տարածաշրջաններում: «Ժողովուրդ» օրաթերթը այս մասին տեղեկանում է նոր կորոնավիրուսային վարակի դեմ պայքարի դաշնային օպերատիվ շտաբից:

«Անցած շաբաթվա ընթացքում նոր կորոնավիրուսային վարակով հիվանդացության ցուցանիշը 100 հազար բնակչության համար կազմել է 2,82 եւ, նախորդ շաբաթվա համեմատությամբ, ավելացել 19,6 %-ով: Հիվանդացության աճ է նշվել Ռուսաստանի Դաշնության 46 սուբյեկտներում, այդ թվում՝ 18 տարածաշրջաններում աճն ավելին է, քան երկրի միջինը», - մեջբերում է «РИА Новости»-ն հատված հաղորդագրությունից:

Նշենք, որ վերջին շաբաթվա ընթացքում Ռուսաստանի Դաշնությունում կորոնավիրուսով հոսպիտալացվել է 1035 մարդ, ինչը, նախորդ շաբաթվա համեմատությամբ, ավելի է 3,3%-ով: Հոսպիտալացումների թվի ավելացում գրանցվել է Ռուսաստանի 30 սուբյեկտներում, ընդ որում՝ 10 տարածաշրջաններում այս ցուցանիշի աճը երկրի միջինից բարձր է:

Հավելենք, որ շաբաթվա ընթացքում կորոնավիրուսային վարակից ապաքինվել է 3104 մարդ, ինչը 12,1%-ով ավելի է նախորդ շաբաթվա ցուցանիշից: Ըստ օպերատիվ շտաբի տվյալների՝ մեկ շաբաթվա ընթացքում հիվանդությունից մահացել է 11 մարդ:

ՕՆԼԱՅՆ ԿԱՆԳԱՌՆԵՐ

Երեւանի հասարակական տրանսպորտի տեղաշարժն առաջիկայում կերեւա օնլայն քարտեզների վրա, ինչը քաղաքացիներին հնարավորություն կտա օնլայն հարթակներում տեսնել ավտոբուսների տեղաշարժը: Այս մասին նշվեց Երեւանի քաղաքապետարանի հերթական գործակարգավարական նիստի ընթացքում:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունով՝ օնլայն քարտեզների վրա Երեւանի հասարակական տրանսպորտի տեղաշարժն ամրագրելու համար անհրաժեշտ սարքավորումներն արդեն մատակարարվել են, այս պահին իրականացվում են սարքերի կոնֆիգուրացման եւ տեղադրման աշխատանքները:

Նշված աշխատանքների շրջանակներում քաղաքացիները հնարավորություն կունենան ոչ միայն առցանց ռեժիմով տեսնել ավտոբուսի շարժը եւ դրա մոտենալու ժամանակահատվածը դեպի նախատեսված կանգառ, այլ տվյալ ավտոբուսում հասանելի կլինի անվճար wi-fi ծածկույթ՝ ինտերնետ հասանելիությամբ:

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 9 ՃՏՊ. 13 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Բիէսթի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտը.

-Շիրակի մարզ, համայնք Գյումրի ք., Ղանդիլյան փողոց, 1/1ա շենք, 26 հասցեում գտնվող 86,43 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 13420000 ՀՀ դրամ:

Լոտի նկատմամբ սահմանափակումները՝ գույքը գրավադրված է:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 15.09.2023թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 16.10.2023թ.-ին: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի էս Թի» ՍՊԸ-ի դրամարկղում՝ աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին) կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքերը:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կորել է «Պարթեւ» ՍՊԸ-ի կնիքը: Տ-նօրեն՝ Լուսինե Կարապետյան, ՀՎՀՀ՝ 06104283: Համարել անվավեր:

ՏԿՅԱԼՆԵՐ

ԻՆՉ ՊԱՏԿԵՐ Է ԲՈՒՀԵՐՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթը ԳԹԿ-ից տեղեկանում է, որ ընդունելության քննությունների հիմնական փուլում սահմանված շեմը Երեւանում հաղթահարել են դիմորդների 67,1 տոկոսը՝ 3158 դիմորդ, լրացուցիչ փուլում ընդունվել են եւս 402-ը: Այս մասին Երեւանում ուսուցիչների հետ օգոստոսյան խորհրդակցության ժամանակ նշել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի փոխնախարար Արաքսիա Սվաջյանը:

Ընդհանուր առմամբ, Երեւան քաղաքի դիմորդներից ընդունվել է 3560-ը՝ 75,6 տոկոսը, որից անվճար՝ 636-ը:

Փոխնախարարը ներկայացրել է նաեւ ընդհանուր պատկերը՝ ըստ բուհերի: Առաջին տեղում Երեւանի պետական համալսարանն է 914 ուսանողով, այնուհետ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը՝ 409 ուսանող, իսկ Պոլիտեխնիկական համալսարանը, ըստ ցուցանիշների, երրորդ տեղում է 457 ուսանողով:

Անդրադառնալով Հայկական պետական մանկավարժական համալսարանին՝ Արաքսիա Սվաջյանը նշել է, որ Երեւանից բուհ ընդունվել է 154 ուսանող:

«Այս տարի Մանկավարժական համալսարանում ունենք տարբերություն. բնագիտական մասնագիտությունները, որոնք նախորդ տարիներին թափուր էին, այս տարի զգալիորեն համալրվել են»,- ասել է նախարարի տեղակալը:

Հավելենք, որ, Կառավարության որոշմամբ, բնագիտական առարկաների ուսուցիչներ պատրաստող բուհերը 70 000 դրամ կրթաթոշակ են տրամադրելու համապատասխան ֆակուլտետների ուսանողներին, գերազանցության դեպքում՝ 77 000: Մեկ այլ ծրագրով բնագիտական առարկաներ դասավանդող ուսուցիչներին կտրվի 25 տոկոս լրավճար: Ըստ Արաքսիա Սվաջյանի՝ սա բնագիտական առարկաներ դասավանդող ուսուցիչների բացը լրացնելու եւ ոլորտի նկատմամբ երիտասարդների հետաքրքրությունը խթանելու հերթական ծրագրերից մեկն է:

Անդրադառնալով մասնագիտություններին՝ նշվել է, որ ցանկը գլխավորում է «Բուժական գործ» մասնագիտությունը՝ 183 ուսանողով, այնուհետ «Ճարտարապետություն»՝ 146, «Ինֆորմատիկա եւ կիրառական մաթեմատիկա»՝ 90 ուսանող:

«Այս տարի ունեինք նաեւ տարկետման իրավունք ունեցող մասնագիտություններ, որոնք ուսումնասիրում են բնագիտական ոլորտը: Երեւանից ունենք 155 ուսանող, որից 38-ը՝ ֆիզիկա, 30-ը՝ ռադիոֆիզիկա, 29-ը՝ հեռահաղորդակցություն եւ ազդանշանների մշակում եւ այլն»,- ներկայացրել է Արաքսիա Սվաջյանը:

Միասնական քննություններում ամենաբարձր արդյունքներ գրանցած առարկաներն են «Անգլերենը» եւ «Հայոց պատմությունը»: Ըստ փոխնախարարի՝ մտահոգիչ են «Հայոց լեզու եւ գրականություն» եւ «Մաթեմատիկա» առարկաների միջին միավորները, ինչը ենթադրում է լրացուցիչ աշխատանք հետագա տարիներին դրանք եւս բարձրացնելու ուղղությամբ:

Հիշեցնենք՝ 2023-2024 ուսումնական տարվա օգոստոսյան խորհրդակցությունների շարքը մեկնարկել է օգոստոսի 21-ին Արագածոտնի մարզից: Այն նպատակն ուներ, նոր ուսումնական տարվան ընդառաջ, ոլորտի խնդիրները քննարկել տեղերում տնօրենների եւ հանրակրթության մարզային պատասխանատուների հետ:

ԱՐՑԱԽ

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՏԵՍՔՈՎ

Արցախի Հանրապետության սոցիալական զարգացման եւ միգրացիայի նախարարությունից հայտնում են, որ սույն թվականի օգոստոսի 30-ից կմեկնարկի Ստեփանակերտ քաղաքում բնակվող՝ որոշ կատեգորիաների անձանց սննդամթերքի տեսքով սոցիալական աջակցության տրամադրման ծրագիրը:

Ծրագրի շահառուներ կհանդիսանան 2023 թվականի օգոստոսի 28-ի դրությամբ՝

- 18 տարին չլրացած անձինք,
- 63 տարին լրացած անձինք,
- հաշմանդամություն ունեցող անձինք:

Յուրաքանչյուր շահառուի աջակցությունը կներառի 1 կգ միս, 1 կգ կարտոֆիլ եւ 1 կգ ձավարեղեն:

Աջակցություն ստանալու նպատակով շահառուն կամ նրա ընտանիքի չափահաս անդամներից մեկը կարող է մինչեւ 2023 թվականի սեպտեմբերի 21-ը (ներառյալ) դիմել Ստեփանակերտ քաղաքի Ազատամարտիկների փ. 39 հասցեում տեղակայված՝ ԱՀ պետական տեսչությունների կառավարման կոմիտե կամ ԱՀ բնակարանային հարցերի կոմիտե՝ ներկայացնելով շահառուի անձը հաստատող փաստաթղթի բնօրինակը, հանրային ծառայությունների համարանիշը, իսկ հաշմանդամություն ունեցող անձի դեպքում՝ նաեւ փորձաքննական որոշման մասին տեղեկանքը:

Եթե շահառուի փաստաթղթերը ներկայացվում են շահառուի ընտանիքի անդամի կողմից, ապա պարտադիր է նաեւ դիմողի անձը հաստատող փաստաթղթի բնօրինակը:

ԱՀ պետական տեսչությունների կառավարման կոմիտեի կամ ԱՀ բնակարանային հարցերի կոմիտեի կողմից կտրվի համապատասխան կտրոն, որը պետք է մինչեւ 2023 թվականի սեպտեմբերի 25-ը (ներառյալ) ներկայացվի սննդամթերքի տրամադրման նպատակով առանձնացված տեղամասերից մեկը:

Սննդամթերքի տրամադրման տեղամասերը կգործեն Ստեփանակերտի կենտրոնական շուկայում եւ Հաղթանակի հրապարակի մոտակայքում գտնվող՝ «Էլիտ Գրուպ» ՍՊԸ եւ «Մասիս Մկրդունց» ԱՁ մսամթերքի վաճառքի խանութներում:

«Խնդրում ենք սննդամթերքի տրամադրման տեղամաս ներկայանալ համապատասխան տոպրակներով:

Հավելյալ տեղեկությունների համար կարող եք զանգահարել ԱՀ պետական տեսչությունների կառավարման կոմիտե 047-96-01-32 հեռախոսահամարով»,- ասված է նախարարության տարածած հաղորդագրության մեջ:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ՇՈՈՒ ԲԻԶՆԵՍ

ՄԱԴՈՆՆԱՆ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ԶԱՐԴԵՐՈՎ

Մադոննան ներկայացել է լիբանանահայկական ոսկերչական YEPREM ապրանքանիշի զարդերով:

Ապրանքանիշը հիմնադրվել է 1964 թվականին լիբանանահայ ընտանիքի կողմից: Ընկերության պատմությունը սկսվում է այն ոսկե ապարանջանից, որը Վիրնա Չակարդեմյանի հայրը նվեր է ստացել մորից: Հիմնադրումից 60 տարի անց համաշխարհային աստղերը պատված են Չակարդեմյանների ընտանիքի ադամանդներով:

Ապրանքանիշը սոցցանցերում կիսվել է Մադոննայի լուսանկարներով, որոնցում երգչուհին կրում է YEPREM զարդեր: Material Girl թրեքի կատարողն ակտիվորեն նկարներ է հրապարակել իր 65-ամյակի արարողությունից, որոնցում նա կրում է ադամանդներով YEPREM մատանիներ: Այս տեսակի զարդերի մեկնարկային գինը 2200 դոլար է, իսկ ամենաթանկարժեքը կարժենա 45 հազար դոլար: Պատվերները պատրաստվում են ձեռքով եւ կարող են մի փոքր տարբերվել միմյանցից: Դրա պատճառը քարերի բնական մոդիֆիկացիան է:

Նախկինում Մադոննան փորձել է նաեւ YEPREM զարդեր 2022 թվականի իր ծննդյան խնջույքին: Նա նաեւ եղել է V Magazine-ի շապիկին՝ կրելով ապրանքանիշի մատանիները: Իսկ 2015 թվականին Cosmopolitan-ի նկարահանումների համար երգչուհին կեցվածք է ընդունել բրենդի ամենաճանաչված մոդելներից մեկով՝ The Claw-ով:

Նշենք, որ աշխատանքային այցով Հայաստան էր ժամանել համանուն ապրանքանիշի հիմնադիր Եփրեմ Չակարդեմյանը: Նա այցելել է Chronograph բուտիկ, որտեղ վաճառվում են բարձրակարգ ժամացույցներ եւ զարդեր, այդ թվում՝ հայ-լիբանանյան YEPREM ապրանքանիշի:

Հավելենք, որ Մադոննան ամերիկացի երգչուհի, պրոդյուսեր եւ երգահան է, որը ծնվել է Հուրոն լճի ափին գտնվող Բեյ Սիթի փոքր քաղաքում: Նրա հայրը՝ Սիլվիո Չիկկոնեն, իտալական ծագումով ամերիկացի է, աշխատում էր որպես ինժեներ-դիզայներ Քրայսլեր եւ General Dynamics ընկերություններում: Մադոննան 6 երեխաներից 3-րդ է իր ընտանիքում:

Մադոննան մեծացել է կաթոլիկ ընտանիքում: Մադոննայի մայրը մահացել է կրծքի քաղցկեղից 30 տարեկանում (1963 թ.): Հայրը ամուսնացել է սպասուհու հետ, նրանք ունեցան 2 երեխա: Մադոննան համոզեց հորը, որպեսզի հաճախի բալետի դասընթացների: Դեռ երիտասարդ տարիքում նա հաճախում էր Սուրբ Ֆրեդերիկի, Սուրբ Էնդրուի եւ West Middle դպրոցներ: Դպրոցն ավարտելուն պես նա ընդունվում է Միչիգանի համալսարան, որտեղ էլ ստանում է պարային կրթություն: Հետագայում, սակայն, Մադոննան իրեն նվիրում է երաժշտությանը:

ԱՇԽԱՐՀ

ARARAT–Ը՝ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐ ⇨

Միջազգային հայտնի Just Drinks Excellence Awards ալկոհոլային խմիչքների մրցույթը ամփոփեց 2023 թվականի արդյունքները՝ ARARAT-ին երկու պատվավոր մրցանակ շնորհելով:

Այսպես, ARARAT-ը իր համահոտային շարքի ARARAT Cherry-ով հաղթող է ճանաչվել «Նորարարություններ» եւ «Արտադրանքի լավագույն ներկայացում» անվանակարգերում:

«ARARAT-ը իր համահոտային շարքով հայկական կոնյակին հաղորդում է բացառապես նոր հարթություն՝ բացելով նրա համար լիովին նոր հնարավորություններ, սպառման նոր եղանակներ եւ նոր լսարան»,- ասված է մրցանակաբաշխության հայտարարության մեջ:

Միավորելով ոլորտի լավագույն մասնագետներին՝ գիտնականներից մինչեւ համտեսողներ, Just Drinks Excellence Awards մրցույթը տարեկան դիտարկում է հազարավոր հայտեր աշխարհի տարբեր երկրներից:

Հիշեցնենք, որ ARARAT-ի համահոտային շարքը մեկնարկել է 2019 թվականին եւ ներառում է հետեւյալ տեսակներին՝ ARARAT Apricot, ARARAT Coffee,

ARARAT Cherry եւ բոլորովին վերջերս թողարկված ARARAT Honey-ն:

ARARAT-ի համահոտային նորարարական շարքը նպատակ ունի ամրացնելու բրենդի դիրքերը «Պրեմիում+» կատեգորիայում ու ներգրավելու նոր սպառողներ: Երեւանի կոնյակի գործարանի մասնագետների եւ ARARAT-ի աշխարհասփյուռ թիմերի հետեւողական աշխատանքի շնորհիվ նախորդ տարիներին թողարկած ARARAT Apricot-ը, ARARAT Coffee-ն եւ ARARAT Cherry-ն սպառման ծավալներով դարձան եւ արդեն մի քանի տարի պահպանում են աշխարհում առաջին հորիզոնականը «Ներմուծված համահոտային բրենդի» դասում: Դրա մասին են վկայում ալկոհոլային ոլորտի IWSR միջազգային հեղինակավոր հետազոտական ընկերության հաշվետվությունները:

ԳԵՐԱԶԱՆՑԵԼ Է «ՀԱՐՐԻ ՓՈԹԵՐԻՆ»

Պաշտոնապես «Barbie»-ն դարձել է Warner Bros.-ի պատմության ընթացքում ամենաշատ եկամուտ ունեցող ֆիլմը: Այն գերազանցել է «Հարրի Փոթերը եւ մահվան պարգեւները. մաս 2» ֆիլմի ռեկորդը, որը պահպանվում էր 12 տարի: Այժմ Գրետա Գերվիգի ժապավենը տոմսարկղերում պաշտոնապես ունի ավելի քան 1,342 միլիարդ դոլար: Այս մասին հաղորդում է MovieWeb-ը:

Մարգո Ռոբբիի մասնակցությամբ հիթն արդեն բավականին ռեկորդներ է գերազանցել իր ճանապարհին եւ դեռ ցուցադրվում է կինոթատրոններում՝ թվային հարթակներում սեպտեմբերի 5-ին թողարկվելով:

Այսպիսով, եզրակացությունը նույնն է՝ մի՛ թերագնահատեք կարծրատիպային շիկահերների ուժը:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀԱՋՈՂ ՄԵԿՆԱՐԿ

Ռուսաստանը ներկայացնող հայ թենիսիստուհի Էլինա Ավանեսյանը (66-րդ ռակետ) հաջող մեկնարկ է ունեցել թենիսի Մեծ սաղավարտի մրցաշարերից մեկում՝ ԱՄՆ-ի բաց առաջնությունում:

Մեր հայրենակիցը երեք սեթում առավելության է հասել Ֆրանսիան ներկայացնող Ալիզե Կորնեի նկատմամբ՝ 6:2, 1:6, 6:4: Մրցախաղը տեւել է 2 ժամ 4 րոպե:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՉՈՐՐՈՐԴՆ Է

Հայաստանի հավաքականը չորրորդ տեղն է գրավել Գերմանիայի Դյուսելդորֆ քաղաքում կայացած արագ շախմատի աշխարհի թիմային առաջնությունում:

Վերջին՝ 12-րդ տուրում հայ շախմատիստները 3:5-2:5 հաշվով հաղթել են Հնդկաստանը ներկայացնող Six-pack թիմին ու վաստակել 17 միավոր:

Հայաստանի հավաքականի կազմում ընդգրկված էին Գաբրիել Սարգսյանը, Հայկ Մարտիրոսյանը, Շանթ Սարգսյանը, Սամվել Տեր-Սահակյանը, Մամիկոն Ղարիբյանը, Էլինա Դանիելյանը եւ Ալբերտո Աթոյանը:

14-ամյա Ալբերտո Աթոյանը 12 հնարավորից վաստակել է 10.5 միավոր եւ լավագույն արդյունքը գրանցել առաջնության 286 մասնակիցների մեջ: Աթոյանը նաեւ 170 կետով բարելավել իր վարկանիշն արագ շախմատում:

Չեմպիոնի տիտղոսը նվաճել է WR Chess թիմը, որը հավաքել է 22 միավոր: Լավագույն եռյակում են նաեւ Freedom (20 միավոր) ու Team MGD1 (17 միավոր) թիմերը: Kompetenzakademie Allstars թիմը, որի կազմում խաղում էր Հայաստանի հավաքականի նախկին առաջատար Լեւոն Արոնյանը, 13 միավորով գրավել է 11-րդ տեղը: 9-րդ տուրում Հայաստանի հավաքականը 3:5-2:5 հաշվով հաղթել էր Kompetenzakademie Allstars-ին:

ՆՈՐ ՖՈՒՏԲՈԼԻՍՏՆԵՐ

Հայաստանի Մ-21 հավաքականը սկսում է նախապատրաստվել ՈՒԵՖԱ Եվրոպայի 2025 թվականի առաջնության որակավորման փուլի հանդիպումներին:

Հավաքականի գլխավոր մարզիչ Ռաֆայել Նազարյանը ՀՖՖ կայքում հրապարակել է հավաքական հրավիրված ֆուտբոլիստների ցանկը:

Հայաստանի Մ-21 հավաքականը կսկսի նախապատրաստությունը սեպտեմբերի 4-ին: ՈՒԵՖԱ Եվրոպայի 2025 թվականի առաջնության որակավորման փուլի շրջանակում Հայաստանի Մ-21 հավաքականը առաջին 2 հանդիպումը կանցկացնի Հայաստանում: Սեպտեմբերի 8-ին մեր ընտրանին Աբովյանի Վահագն Թումասյանի անվան մարզահամալիրում կհյուրընկալի Ալբանիայի, իսկ սեպտեմբերի 12-ին՝ Չեռնոգորիայի Մ-21 ընտրանիներին:

● *Օգոստոսի 31-ին «Մեցցո» ակումբում տեղի կունենա Another Story Band-ի համերգը: Տոմսերի արժեքը՝ 4000 դրամ: Սկիզբը՝ ժամը 21:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՅՎԱԾ

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ ժամկետներում եւ ի՞նչ դարբերականությամբ է ներկայացվում գիտական աստիճանի համար հասկացվող ֆինանսավորման հայտը:

Լենա Գյուլբենկյան (46 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Ծրագրեր իրականացնող կազմակերպությունները յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվա մինչեւ 20-ը կոմիտեի orgs.scs.am առցանց համակարգ մուտք են անում յուրաքանչյուր ամսվա համար ծրագրերում ընդգրկված գիտական աստիճան ունեցող գիտաշխատողների տվյալները եւ դրանց հիման վրա ձեւավորված եռամսյակային հաշվետվությունը յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվա մինչեւ 30-ը ներկայացնում են կոմիտե: Թեմաներ իրականացնող կազմակերպությունները յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվա մինչեւ 30-ը կոմիտե են ներկայացնում հաշվետվություն՝ թղթային տարբերակով: Տարվա վերջին եռամսյակի առցանց հաշվետվությունը ներկայացվում է մինչեւ ընթացիկ տարվա դեկտեմբերի 7-ը, իսկ թղթայինը՝ մինչեւ ընթացիկ տարվա դեկտեմբերի 10-ը:

Բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հաշվետու եռամսյակի հաշվետվությունը չներկայացնելու դեպքում հաշվի է առնվում նախորդ ներկայացված տեղեկատվությունը՝ անկախ չներկայացման պատճառներից:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

ՀԱՐՑ. Ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ բնակելի տարածքների սեփականաշնորհման համար:

Գասպար Պետրոսյան (42 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հանրակացարանային բնակելի տարածքները սեփականաշնորհվում են տվյալ հանրակացարանը տնօրինող վերադաս կառավարման մարմին, 1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթած եւ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձի կողմից ներկայացված դիմումի հիման վրա, նրա հետ բնակվող ընտանիքի չափահաս անդամների գրավոր համաձայնության առկայության դեպքում:

Պետական գույքի կառավարման կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Դիմումին կից ներկայացվում են իրավասու մարմինների կողմից տրված՝ անձի՝ 1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթելու եւ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու փաստը եւ զբաղեցրած հանրակացարանային բնակելի տարածքում անձի՝ 3 տարվանից ավելի բնակվելու փաստը հաստատող տեղեկանքներ:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Հայաստանի ավանդական ուշուի ֆեդերացիայի մարզիկները մասնակցել են Չինաստանի Էմեյշան քաղաքում անցկացված ուշու-կունգֆուի աշխարհի առաջնությանը եւ 1 ոսկե, 2 արծաթե եւ 2 բրոնզե մեդալ են նվաճել:

Աշխարհի չեմպիոնի կոչմանն արժանացել է Արտաշես Ավագյանը՝ ոսկե մեդալ նվաճելով Հունգար ոճում:

Հատկանշական է, որ սա բացառիկ նվաճում է հայկական ուշուի պատմության մեջ 22 տարվա ընթացքում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 7 + 12	+22 + 27
Կոտայքի լեռներ	+7 + 11	+22 + 25
Կոտայքի նախալեռներ	+15 + 17	+26 + 29
Գեղարքունիք	+9 + 13	+19 + 23
Լոռի	+10 + 13	+19 + 22
Տավուշ	+14 + 17	+22 + 24
Արագածոտնի լեռներ	+8 + 11	+21 + 23
Արագածոտնի նախալեռներ	+14 + 18	+ 26 + 31

Արարատ	+17 + 19	+30 + 32
Արմավիր	+15 + 17	+30 + 32
Վայոց ձորի լեռներ	+ 9 + 11	+20 + 22
Վայոց ձորի նախալեռներ	+17 + 19	+30 + 32
Սյունիքի հովիտներ	+17 + 20	+22 + 26
Սյունիքի նախալեռներ	+ 11 + 14	+ 18 + 20
ԼՂՀ	+17 + 20	+21 + 25
Երեւան	+ 19 + 21	+ 29 + 31

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **29.8.2023**
Հասցեն՝ Գերաքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*